ՆՈՐ-ԴԱՐ

№ 15 ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ Հ աբաթ 7 փետրվարի 1887 Հ աբաթ 7 փետրվարի ՉՈՐՐՈՐԴ ՏԱՐԻ № 15

Տաբեկան 10 բուբլի, վեց ամիսը՝ 6 բուբլի, երեք ամիսը՝ 3 բ. 50 կ., ամիսը՝ 1 բ. 50 կ., Հատը՝ 5 կոպէկ։
Բաժանորդ գրվում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրատունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուներով։
Յայտարարութիւնների բաժին 2 կ., երեքսիների համար հերնապատիկ։

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ի գիտութիւն հասարակութեան յայտարարում է, որ ջրանցքի խողովակները Պեսկովկի փողոցում շինելու պատճառով սոյն փետրվարի 7-ից մինչի աշխատութեան վերջանալը կառքերի երթևեկութիւնը Սամանովայ հրապարակից մինչի առաջին Պեսկովկի փողոցը արգիլվում է։

1—1

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Խմբագրութիւնս խնդրում է այն յարգելի պարոններից, որոնց վերայ մնում են տարեկիկ փողեր անցեալ 1886 թուականից կամ 1885 թուականից կամ 1884 թուականից, բարեհաճեն շուտափոյթ հասցնել նրան. հակառակ դէպքում թող յայտնեն դրանք թէ ինչո՞ւ չեն վճարում իրենց պարտքը, որպէս զի չվճարող բաժանորդների ցուցակ կազմելու ժամանակ յայտնի լինի, թէ ով ինչու չէ վճարում իւր պարտքը։ Խմբագրութիւնս միջոց չունի և անկարող է տարեկիների մասին առանձին նամակագրութիւն անելու և ամենևին մտադիր չէ իւր ստանալիքներից հրաժարուելու։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Բրոնիկոն.—Լուրեր։
Թղթակցութիւններ.—Վարք-բաղաքական.—Քաղաքական տեսութիւն։ Լուրեր։
Խառն լուրեր։
«Նոր-Դար»-ի հեռագիրներ։
«Նոր-Դար»-ի պատասխաններ։
Բանաբերական. — Բարեբար և արդիւք (Պատկեր կեանքից)։
Յայտարարութիւններ։

ՔՐՈՆԻԿՈՆ

«Նոր-Դար»-ի ընթերցողներին յայտնի է, որ ներկայ տարեսանից Բագուում բացվում է ազնավաճառանոց, որ սեպտեմբ է մայիսի 6-ից մինչև յունիսի 1-ը։ Ամեն Բագուի քաղաքագլուխ Դէնպօ-Զինովիչ, որ ազնավաճառանոցի յանձնաժողովի նախագահն է միևնոյն ժամանակ, ուզարկել է խմբագրութեան ազնավաճառանոցի կանոնները, որոնց հետ միասն անդամ կաչխատենք մանրամասն ծանօթացնել մեր ընթերցողներին։ Կանոնների հետ գրուած է և ազնավաճառանոցի յատակագիծը—մանրամասն բացատրութիւններով, որպէս զի գրանով ուրիշ տեղի անձերն էլ, որոնք կը կամենան մասնակից լինել ազնավաճառին, կարողանան իրենց համար կանխագէս որոշել տեղ առնել, որ կարելի է անել և հետագրով։

Պ. Դէնպօ-Զինովիչ խմբագրութեանս ուղղած նամակում բացատրում է ազնավաճառանոցի նպատակն ու տեղի ընտրութեան պատճառները։ Նամակի մէջ ասուած է, որ ներկայ տարուայ Նորին Կայսերական բարձրութիւն ժառանգ Նիկոլայոս Ալէքսանդրովիչի ծննդեան օրը իւրաքանչիւր տարի Բագուում բացվում է Նիկոլայեսեան ազնավաճառանոց։ Թէև Բագուն Անդրկովկասի ամենաազդայարար կէտերից մինն է, բայց և այնպէս ազնավաճառի ժամանակամիջոց ընտրուած է մայիս թեան կէսերով արդէն չէ։ Վերջապէս նա սիրտ առաւ, բայց դուռը և ներս մտաւ։ Այն սենեակը ընդունարանն էր։ Փափուկ գորգերի վերայ քալելով, նա անցաւ դահլիճն, իսկ դահլիճից ազդակի պէս Գրիգոր Մօսէյիչի առանձնասենեակը։

Աղա Գրիգոր Մօսէյիչը՝ խալաթը հագին՝ նստած էր գրասեղանի առաջ և ինչ-որ հաշիւներ էր անում։ Որպէս մանեցուն պէս՝ նա իւր առոյգ դէմքը դէպի նա դարձրեց և քաղցր երեսով, չաս զարմացաւ։ Գարեգինը թեթև կերպով գլուխ տուեց նրան և մի քանի վայրկեան սպասել ուժեց ից ետոյ, ասաց.

—Հայր, ներեցէք ինձ, որ համարձակվում եմ այժմ այսպէս չանկարծակի կերպով, առանց նախապէս իմաց տալու, խանգարել ձեզ... ես ձեզ մի խնդիրք ունեմ... առաջին անգամ իմ ողջ կեանքի մէջ ես համարձակվում եմ մի այսպիսի խնդիրքով պիտելու ձեզ, հայր, լսելով, որ դուք այնքան բարի և մեծահոգի կը դտնուիք, որ չէք մերժիլ իմ այդ առաջին խնդիրքը...

— Ի՞նչ էք կամենում,—բաւական նկատելի կոպտութեամբ և անհամբերութեամբ հարցրեց աղա Գրիգոր Մօսէյիչը, քամակը դէպի նա անելով։

Գարեգինը դեռ մի քանի վայրկեան, կարծես, չկարողացաւ ձայն հանել։

—Ես եկել եմ ձեզանից խնդրելու, հայր... հազար րուբլի,—վերջապէս հազիւ հազ կարողացաւ արտասանել նա։

Այդ լսելուն պէս՝ աղա Գրիգոր Մօսէյիչը չաս եկաւ իւր աթոռի վերայ չաւալով և զարմացած դարձաւ դէպի նա։

—Հազար րուբլի,—երկարացրեց նա, իւր նայելով նրա դէմքին։

—Այո, հայր...

—Ի՞նչ բանի համար։

—Չարկաւոր է... չատ չարկաւոր է...

Աղա Գրիգոր Մօսէյիչն աւելի խոր նայեց նրա դէմքին։

—Ջանիմ,—կարեան կերպով պատասխանեց նա և դարձեալ չուռ գալով, չարունակեց իւր ընդհատած հաշիւները։

—Հայր, ես չեմ ասում, թէ այդ գումարն ինձ նաւերեցէք, այլ փոխ տուէք, որը մի ժամանակից վճառ ես դարձեալ կը դարձնեմ ձեզ...

—Ջանիմ, չանիմ,—նոյն կոպտութեամբ պատասխանեց աղա Գրիգոր Մօսէյիչը, առանց բարձրացնելու գլուխը հաշիւների վերայից։

Որպէս մի բոլշ լուռ ծօրը նայելով մեռոց արձանացած, իսկ հայրը, կարծես մտածել էր անգամ, որ իւր ներսում մարդ կայ կանգնած։

—Ներեցէք ինձ, հայր, որ ի գուր տեղը ձեզ անհանգստութիւն պատճառեցի,—վերջապէս ասաց նա և գարձեալ թեթև գլուխ տալով նրան, առաջ անցաւ դէպի դուռը։

Աղա Գրիգոր Մօսէյիչը մի ինչ որ մրմնջեց իւր քթի տակից։

Որպէն առանց նա նայելու դուռս դնաց նօր առանձնասենեակից։

Բարձրանալով վերին յարկը և մրանելով քրոջ ու ընկերի մօտ, նա գուռ այնտեղ մօրը, սիկ. Գալիանէին, որն առաւօտեան եկեղեցի գնացած լինելով, նոր էր վերադարձել տուն։

—Չը, ինչպէս եղաւ,—առանից առաջ գնեսից նրան քրոջը։

—Ես գիտ որ ասում էի, թէ նա ինձ մի գրոշ անգամ չի տալ, դու ինձ չէիր հաւատում,—պատասխանեց Գարեգինը, —և գնա ուզում էիր համոզել էլ, որ նա այն աստիճան անպիտան և անգութ չէ, որպէս ես էի կարծում...

—Ի՞նչ ասաց ։

—Ոչդակի ասաց—չանիմ և գէմքը դարձրեց լենաներից։ Երևակայում եմ, թէ ինչ կանէր, եթէ չպանէի, որ այդ փողը ուրիշի համար է, և եթէ ասէի, որ այդ ուրիշը պատրաստ է տոկոս վճարելու կամ իւր երեք հազարանոց տունը գրաւ դնելու...

—Եթէ ես այստեղ լինէի, մի քայլ անգամ չէի թողնիլ քեզ անելու դէպի նրա սենեակը,—ասաց սիկ. Գալիանէն, որին Խոհանին և Սմբատն արդէն ծանօթացրել էին գործի հանգամանքի հետ։—Կարծես դու նրան նոր պիտի ճանաչէիր, որ դնում էիր նրանից հազար րուբլի փող խնդրելու։

—Ես չէի գնում, Խոհանին ինձ ուղարկեց։

—Ապա ինչ անէի, մայրիկ,—մէջ մտաւ Խոհանին,—այս պարոնը չուտափոյթ օգնութեան է կարօտ և դրա համար գիմել է մեզ...

—Ա՛խ, եթէ գիտենայի, թէ ձեզ այդքան նեղութիւն կարող եմ պատճառել, ես երբէք չէի գալ այստեղ,—բաւական անօթահարուած խօսեց Սմբատը, տեղից վեր կենալով։—Խնդրում եմ ներեցէք ինձ... Ի՞նչ անենք, այնքան էլ մեծ ցաւ չէ... կեանքս խո չէ գնալու, մի տուն է—թող տանեն... առանց դրան էլ կարող եմ ապրել և պահել մօրս...

—Ո՛չ, ձեր տունը, պարոն Սմբատ, ձեզ կը մնայ,—ծանրութեամբ ասաց ս. Գալիանէն։—Խնդրեմ փոքր ինչ համբերութիւն ունեցէք և դարձեալ նստեցէք ձեր տեղը։

Եւ նա առանց չտապալու, իւր հանդարտ քայլերով գուռս գնաց դէպի միւս սենեակ։

Սմբատը, Խոհանին և Գարեգինը դրեթէ միասին ապշած։ Նրանք ոչ մի խօսք չկարողացան արտասանել մինչև որ երկու րոպէից վեռ սիկ. Գալիանէն

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԲԱՐԵԲԱՐ ԵՒ ԱՐԴԵԳԻՐ *)

(Պատկեր կեանքից)

—

Աղա Գրիգոր Մօսէյիչի աչքը բազկացած էր երեք չարկից։ Ներքին չարկը արտաց էր վարձով, միջին չարկում առանձնասէն ապրում էր ինքն աղա Գրիգոր Մօսէյիչը Բարեբար հետ, իսկ վերին չարկը լռնած էին սիկ. Գալիանէն, Գարեգինը և Խոհանին։

Գարեգինը ոլորապտոյտ սանդուղքներով իջաւ դէպի միջին չարկը, անցաւ երկար միջանցքով և կանգնեց աղա Գրիգոր Մօսէյիչի մինի դրան առաջ։ Նա իւր ողջ կեանքի մէջ չատ քիչ անգամ էր մտել այդ սենեակները և առաւել ևս քիչ էր խօսել աղա Գրիգոր Մօսէյիչի հետ, այնպէս որ նա այժմ այն վստահութեամբ չէր պատրաստվում մանելու վերջինիս մօտ, ինչ վստահութեամբ որ պիտի մանէր սրդին իւր հարազատ հօր մօտ, այլ այնպէս, ինչպէս օտարը՝ օտարի մօտ։ Դեռ մի բոլշ անվճռական կերպով նա կանգնած էր դրան առաջ։ Նրա սիրտը

*) Տես «Նոր-Դար» № 14.

ՊՈՏԵՍՏԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿԱՆ

ՆՈՒՄԵՐՈՎ, 2 փետրվարի — Պետարժ.

Ամսագիր «Երկրագործական Տնտեսություն»-ի ապրիլ ամսվա համարում կարդում ենք հետևյալ հետաքրքրական հոդվածը.

Ցանկանալով իմանալ, թե ինչպես է ընդունվում ռուսական գութանը մեր գյուղացիների կողմից, ես ուղևորվեցի Ղարաքիլիսայի գավառի Ալեքսանդրովկա գյուղը, որտեղ ռուս գաղթականներ են բնակվում։ Ալեքսանդրովկա գյուղը գտնվում է Ղարաքիլիսայից 5 վերստ հեռավորության վրա։ Գյուղում կա 40,000 դեսյատին հողատարածություն և ունի 400 ծուխ։ Գյուղի բնակիչները գաղթել են Կարսի մարզից 1878 թվականին։ Գյուղացիները ստացել են 15 դեսյատին հող մեկ ծխի համար։ Ամեն մի ծխի համար հատկացրել են 3 զույգ եզներ, մեկ ձի, մեկ կով, մեկ հնձվոր մեքենա, մեկ սայլ և մեկ գութան։ Գյուղացիները ստացել են նաև 1000 ռուբլի փոխառություն։ Ամեն մի ծխի համար հատկացրել են 3 դեսյատին հող։ Գյուղացիները ստացել են նաև 1000 ռուբլի փոխառություն։ Ամեն մի ծխի համար հատկացրել են 3 դեսյատին հող։

քրն ուզում է ասել, թէ նա որ երկար տարիների ընթացքում առևտրական յարաբերութիւնների և ժողովրդական կեանքի շրջաններում լինելով, չէ կարողացել ուսումնասիրել երիտասարդի ներքին և արտաքին անցեալ լաւ կամ վատ կողմերը, որ այսօր դրացիների առն մէջ կոկիկ զարդարած ու չքեղ կերպով պճնուած, որոնք երիտասարդի մուտքը ակղորութիւան յատկանիշներն են, առաջին անգամ միայն յայտնվում է իր աչքին, նա որտեղից կարող է իմանալ, քննադատել ու հատկանալ այդ երիտասարդի սիրտը ու յատկութիւնները, որին իր սէրը պիտի նուիրաբերէ, քանի որ [illegible] աղջիկը ծնուած ու մեռած է նահապետական կեանքով, բացի իր հարևնի օջախի ոչ մի շրջանում չէ եղած ու ոչ ոքի էլ չէ ճանաչում։ Ուրեմն ինչ պէտք է արած՝ եթէ ոչ լանձնել իրեն բաղդի անիւներին։ Բայց քանի թշուառութիւնների և աղէտների գոներն են բացվում ապագայում այսպիսի անցքերով միութիւն ձեռք բերող զոյգերի համար։ Յատօք պէտք է խոստովանել, որ այս տեսակ վարուղների թիւը շատ է աւելի քան ձերը դասակարգի, իրենց հասկացող ու զարգացած համարող անձերի մէջ։ Թէև իմացել են, որ օրիորդի կամքի ազատութիւնը ամուսնութեան խնդրի մէջ ընտրութեան իրաւունքների վերաբերութեամբ անբռնաբարելի է, սակայն չգիտեն թէ ինչ պայմանների տակ. միայն «լսել են զանգակի ձայն, չգիտեն ուր է այն»։ Ակներև է, որ ծնողների այս կերպ ընդունած դիրքը դէպի իրենց աղջիկների նշանադրութեան խնդիրը լայն ասպարէզ է բաց անում ապականեալ վարքի ակր շատ երիտասարդների առաջ անմեղ սրտերի ամաքքը խղճերի սիրանալու համար, որոնց օրինակները շատ են։ Եթէ ծնողները ըստ նահապետական սովորութեան իրենց աղջիկների այդ ազատ իրաւունքները չեն ուզում իրենց վերապահել, ուրեմն թող միջոց տան նրանց երկար ժամանակ, որ երկու սրտեր իրար մօտիկից ճանաչեն ու հասկանան, այն ժամանակ միայն նոր մարքերը, նոր զուգարերները ամուսնութեան խնդրի մէջ իրենց նպատակին մօտացած կը լինեն և արդիւնք կունենան։

Ահա այս է գաւառացի օրիորդի վիճակը, որ մեր ազգագէտ սերունդին մարդ դառնալու կոչումն ունի։

*

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Իտալական գործի պարտութիւնը.—Դէպրէտիսի վիճաբանութիւնը և նրա ուղղութիւնը.—Բօրիլան.—Հաբէշների Յովհաննէս Թագաւորը և Բաս-Ալուլայի նամակները.—Իտալիա և Ֆրանսիա.—Իտալիան և Անգլիան Աֆրիկայում.—Հաբէշները և Սուդանցիք.—Բաս-Ալուլայի շրջաբերականի իմաստը։

—

Իտալական գործի պարտութիւնը տարտամելի կերպով ցնցեց իտալացիներին. այդ լուրը նախ տարածուեցաւ ժողովրդի բոլոր դասակարգերի մէջ, որոնք խումբ-խումբ հաւաքուելով սկսան հակացոյցեր անել իտալական միջնադարեան գիմ և բարձրաձայն պահանջել, որ Դէպրէտիսի միջնորդութիւնը հրաժարական տայ, Բօրիլանի—արտաքին միջնորդի հետ միասին։ Ձայները քանի գնում զօրանում էին, այնպէս որ միջնորդութիւնը վերջ ի վերջոյ ստիպուած եղաւ դիմելու ժողովրդի ձայնին. Դէպրէտիսի միջնորդութիւնը հրաժարական տուեց։ Բայց հարցը նրանումն էր, թէ ով պէտք է լռնէր միջնորդ-նախագահի տեղը։ Պարզ երևեցաւ, որ թէև Իտալիայում կազմում է ներկայ միջնորդութեան ուղղութեան հակառակ բանակ, բայց այդ բանակը այնքան թոյլ է, որ դեռ ևս կարող չէ իր միջից անձեր դուրս հանել երկրի քաղաքականութեան առաջնորդելու համար։ Պէտք է նախապէս իմանալ, որ Դէպրէտիսը կողմնակից է «խաղաղութեան միութեան», այսինքն աւստրիա-գերմանական դաշնակցութեան հակիման. Նա երկրի չափերը առաւելապէս ապահովուած և օգտակար է համարում այդ ուղղութեամբ գործելով և դրա համար էլ Բօրիլանին, որ վիճնայում իտալական դեսպանի պաշտօն ունէր, կոչից արտաքին գործերի միութեան լաւ տասկանալով, որ Բօրիլանը արդէն լաւ ըմբռնած կը լինէր աւստրիա-գերմանական դաշնակցութեան և իշ. Բիսմարկի քաղաքականութեան պլան։ Եւ իրաւիք նա սխալուած էլ չէր. Բօրիլանի արտաքին գործերի միութեան կոչուելուց յետոյ Իտալիայի յարաբերութիւնները աւելի ևս սերտացան Աւստրիայի հետ։ Հենց այդ քաղաքական ուղղութիւնն էր, որ իտալական մի կարգի հայրենասէրների մէջ վրդովմունք պատճառեց, որոնք հաշտ կերպով չէին կարողանում նայել, երբ մտաբերում էին մօտիկ անցեալը, երբ իրենք հեծում էին աւստրիական լծի տակ, և որի իշխանութեան ներքոյ է գտնվում այսօր և մի քանի իտալական նահանգներ, Տրիեստ, Տրիենտ... Այս պատճառով էլ ընդդիմադիր կուսակցութիւնը չէր վախցնում մի յարմար միջոց, աւստրիասէր միներսութեան վերայ յարձակուելու, նրան անախորժութիւններ պատճառելու համար — չատ անգամ նրան միևնոյն իսկ հայրենիքի չափերի պատճառութեան մէջ մեղադրելով։ Եւ ահա այդ կուսակցութեան համար յարմար առիթ էր իտալական գործերի պարտութիւնը Աֆրիկայում, որի մէջ սակայն Բօրիլանը ոչինչ մեղ չունի, քանի որ նա հենց սկզբունքով դէմ է գաղթավայրեր աւելացնելու քաղաքականութեան։ Ինչ և իցէ, միներսութիւնը հրաժարական տուեց... բայց Թագաւորը երկար ժամանակ այս և այն անձերի հետ խորհրդակցելուց վերայ, միներսութիւն կազմելը կրկին յանձնեց Դէպրէտիսին։ Բօրիլանի հետ համաձայնելով. այսպէսով ուրեմն, Իտալիայի ապագայ քաղաքականութեան մէջ հարկ է միտրիսէ վիճաբանութիւն անի, քանի որ կրկին նոյն անձերն պիտի լինին երկրի քաղաքական ուղղութեան որոշ գոն տուողները։ Սակայն, որքան էլ Բօրիլանը հակառակ լինէր գաղթավայրեր աւելացնելու քաղաքականութեան, չէր կարող հրաժարուել այդ ուղղութիւնից, քանի որ դա մի անգամ արդէն սկսել էին իր նախորդները, ուստի նոյն իսկ Իտալիայի պատուի, նրա աղեկութիւնը չխոչընդոտելու համար մանաւանդ ստիպուած կլինի այժմ էական միջոցներ գործ դնել Մուսավայում և Արևելեան Աֆրիկայում։ Սակայն ինչպէս երևում է, հարկ չկայ ենթադրել, թէ Իտալիան ուժով կամ նենգութեամբ կը ստիպուի Աբիսինիայի վրայ յարձակուելու։ Ինչպէս ասում են հաւատացնել մի քանի թերթեր, մի ուրիշ վիճաբանութիւն էլ է տեղի ունենալու Իտալիայի քաղաքականութեան մէջ. այդ թերթերի ասելով Իտալիան համոզուել է, որ Անգլիայի բարեկամութեան վերայ իրրև թէ վստահել կարելի չէ, որովհետև վերջինը չէ թոյլ տուել, որ իտալական զօրքը Զէյլայով անցնի և Թչնամու զօրքի առևտուր տարուածէ... և այդ բանը, այդ թերթերի ասելով, Իտալիային ժամանակ է դէպի Ֆրանսիան, որի հետ նրա յարաբերութիւնները լարուած դրութեան մէջ էին... Սակայն չպէտք է միշտ հաւատ ընծայել այսպիսի լուրերին. դրանք ստեղծվում են երբեմն յայտնի նպատակների համար։ Բանը նրանումն է, որ Իտալիան այդ քայլը անելու համար պէտք է, որ բոլորովին թաւ տար իրենից իւր, մինչև այժմ բռնած քաղաքականութիւնը։ Իտալիան մօտենալով Ֆրանսիային, կարող չէ միևնոյն ժամանակ մօտ լինել և Աւստրիային, որի հետ սերտ կապակցութիւն ունենալու համար յատկապէս Բօրիլանը արտաքին գործերի միներսութեան պաշտօնին կոչուեցաւ. այսմի ժամանակ կանացի չատ «չարաբաստիկներ» էր արել և երևում էր, որ այժմ էլ հեռու չէր այսպիսի «չարաբաստիկներից», որին ապացոյց էր նրա թէպէտև սև, բայց նորաձևութեան համեմատ ձևած և կապուածքի վերայ կանգնած չորը։

—Ա՛ բարև ձեզ, Վասիլիյ Պետրովիչ,—ասաց նա հաւերին զարթեցնելու և թիթիլեցրու մի տեսակ խառնած բարբառով և քաղցրալիր ժպիտով մեկնեց դէպի նա իր ձեռքը։

Բարսեղը, որ նրա մանկլուն պէս վեր էր կացել և պիտարիլ էր նրան, համբուրեց նրա ձեռքը, պատասխանելով նրա բարևին, և ուրախացրեց.

—Երկար երեկոյան զուր ինձ ատացիք, որ այսօր ինձ հետ մի չատ կարևոր խօսելիք ունիք և ահա այդ պատճառով ես այժմ եկել եմ ձեզ մօտ, սիրելի Դարիա Կիրիլօվնա։

—Ախ, ես ձեզ հետ այժմ չատ կարևոր խօսելիք ունիմ, պ. Վասիլիյ Պետրովիչ,—պատասխանեց Դարիա Կիրիլօվնան նստելով զահատորակի վերայ։—Նստեցէք խնդրեմ։

Բարսեղը նստեց նրա դիմացը, բազկաթոռի վերայ։

—Մարիկ, խօսեցէք ռուսերէն, ես հայերէն չեմ իմանում,—ասաց Օլեան, որ պատրաստվում էր նստելու Բարսեղի կողքին։

—Ո՛չ, Օլեա,—պատասխանեց մայրը,—քեզ համար աւելորդ է այն, ինչ-որ ես այժմ պիտի ասեմ պ. Վասիլիյ Պետրովիչին... և դու լաւ կանես, եթէ դուրս գնաս միւս սենեակ։

—Ինչի մայրիկ... ես այստեղ կը մնամ, միևնոյն չէ, ես լաւ հայերէն չեմ իմանում...

—Ես քեզ ասում եմ դուրս գնա, մինչև որ կը վերջացնենք մեր խօսակցութիւնը։

—Մինչ դուք ինձ գազանիք ունիք լսելու, տիկ. Դարիա Կիրիլօվնա,—զարմացած այդ նախադասութիւնից՝ հարցրեց Բարսեղը։

—Այդ իսկն կիմանաք,—պատասխանեց նրան Դարիա Կիրիլօվնան և նորից զարձաւ դէպի աղջիկը.—Օլեան, չես լսում... Օլեան անբաւական կերպով մի ինչ-որ փնթփնթաց քիթի տակ և դուրս գնաց դէպի միւս սենեակ։

Ն ա ր—Դ ո ս

(Կը շարունակուի)

լու։ Ասում են, որ իբրև թէ Նէպուսը յայտարարել է, որ մինչև խաղաղութեան մասին խօսք անգամ կարող չէ լինել։

—Արևելեան Րումելիան մտադիր են պաշարողական դրութեան մէջ դնելու։

—Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Ֆլուրանսը աշխատում է դաշնակցութիւն կապել Իտալիայի հետ։

—«Berliner Tageblatt»-ը հաղորդում է, որ Սալսբիւրին պատրաստ է անելու ամեն տեսակ զիջողութիւններ արևելեան խնդրում, միայն թէ Աւստրիա-Ունգարիան համաձայն լինի։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սենեակի տաքութիւնը.—Ֆրանսիական մի հոչակաւոր բժիշկ բնակարանների տաքութեան մասին ասում է, որ եթէ բնակարանների օդը չատ չէ փոխվում, այն ժամանակ պէտք է սենեակի տաքութիւնը լինի ոչ աւելի քան 15 աստիճանը, իսկ եթէ սենեակի օդը անդադար փոփոխվում է, կամ պատերը անդադար բաց ու խուփ են անում, այն ժամանակ հարկաւոր է 18—20 աստիճան տաքութիւն լինի սենեակում, բայց երբէք չպէտք է որ 20 աստիճանից անցնի։ Իսկ աւազակութեան համար այնքան նշանակութիւն չունի տաքութեան այս կամ այն աստիճանը. ամենից աւելի պէտք է հսկել որ սենեակներում օդը բաւականաչափ խոնաւ լինի, որի համար էլ առաջարկում է վառարանների մօտերքը դնել կաժերով ջուր։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԴՐՈՒԹԱԿԱՒԱԼՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՐՄ. 5 Փետրվարի։ Նահանգապետը յայտարարեց, որ Բարձրագոյն Թոյլտուվութեամբ մեծ իշխան Միխայիլ Նիկոլայևիչը ստանձնել է սիբիր-ուրալեան գիտա-արդիւնաբերական ցուցահանդէսի պատուաւոր նախագահի պաշտօնը, որը ներկայ տարուայ ամառն է բացուելու։ Այստեղի ընկերութիւնը յոյս ունի, որ Նորին Բարձրութիւնը կայցելէ Ուրալեան երկիրները և դրա համար էլ մեծ պատրաստութիւններ է տեսնում։

ԲԵՐԼԻՆ. Վիլհելմ Կայսրը առողջ է. նա միայն չէ դուրս գալիս սենեակից ցրտի պատճառով։

ԲԵԼԳՐԱԴ. Խօրվատօվիչը արձակուած է պաշտօնից. նրա տեղը կոչուած է Թօփալօվիչը, որ մինչև այժմ Հասարակական աշխատութեան մինիստր էր։

ՎԵՆՆԱ. Դէլեգացիան կը հաւաքուի մարտի 1-ին։

ԲԵՐԼԻՆ. «Nordd. Allg. Zeit.»-ը յայտարարում է, որ պատերազմի վտանգը միայն այն ժամանակ կը վերջանայ, եթէ ազգը պարլամենտի անդամները ընտրէ այնպիսի անձեր, որոնք վճռած են հաստատապէս ապահովել Գերմանիայի դրութիւնը։

ՍՏՐԱՍԲՈՒՐԳ. 6 Փետրվարի։ Էլզաս-Լօտարինգիայի շատ քաղաքներում և գիւղերում տներ են խուզարկել և ձերբակալել մարդիկ, որոնք մեղադրվում են, որ Ֆրանսիայի հետ գաղտնի յարաբերութիւնների մէջ են եղել։

ԲՈՒԿԱՐԵՍՏ. Պատգամաւորների ժողովը ընդունեց պատգամաւորներից շատերի արած առաջարկութիւնը Եւրոպայում ծանր խճճումներ առաջանալու միջոցին Րումինիայի չէզոքութիւնը պահպանելու և պաշտպանելու համար որոշել 30 միլիօն։ Մինիստր նախագահ Բրատիանօն յայտարարեց, թէ կառավարութիւնը չէ ցանկանում, որ Րումինիան կրկին պատերազմի դաշտ դառնայ։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

Օրդ-ր բ. պ.—Գ. Վ. Ա.-ին։ «Նոր-Դար»-ի համարները ձեզ ուղարկուած են ձեր առաջին նամակը ստացուածվը և այնուհետև էլ չարունակ ուղարկվում է։ Ներկայիս, եթէ մի փոքր ուշացրինք չնախատեսուած արգելքների պատճառով։

Եթէ կրկին չէք ստացել համարները, խնդրում ենք պատանջէք ապտակի պօստից։

Խմբագիր-Հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԻՍԿԱԿԱՆ Է ՄԻԱՅՆ ԴՈՐԾԱՐԱՆԻ ԱՑՍ ԴՐՈՇՄՈՎ.

ՄԻ ՀԱՋԻՐ

Մեղրա-Բուսեղէն-Մալց Էկստրակտ կօնֆեանների Լ. Գ. Պիչա և ընկ. Բրեսլաւում բժիշկ Գ. Վ. Վիգների վկայութիւնը Լօնդոնում։

Ես փորձեցի պ. պ. Լ. Գ. Պիչ և ընկ. Բրեսլաւում Մեղրա-Բուսեղէն-Մալց էկստրակտի ազդեցութիւնը, ինչպէս բժշկական մէջոց հազի, որկրային ճիւղերի բորբոքման դէմ և այլն։ Ես համոզուեցայ, որ նա չինուած է ածիլքից, մեղրից և զանազան բոյսերի հիւթերից, որոնք առ հասարակ հազ բժշկելու ժամանակ աւելի լսիտ են ներգործում քան ածիլքի մաքուր էկստրակտը։ Նա չնորհիւ մեղրի դուրեկան համ ունի, որը և ախտացնում է բոյսերի անախորժ համը։ Նա մեծ խնամքով է պատրաստած և չէ պարունակում իր մէջ վնասակար նիւթեր։ Լօնդոն, 7-ն ապրիլի 1880 թ. Պրօֆես դ-ր Գ. Վ. Վիգներ։

Մի չիլի գինն է 1 ր. 25 կ. և 2 ր. 40 կ. Լօնֆեկտներ 30 կ. և 50 կոպէկ։

Ձանազարհածախսը առանձին է հաշվում։ Ռուսիայի համար գլխաւոր պահեստը գըտնվում է Պետերբուրգում Վ. Աւրլիի մօտ, Սարհմանական № 4։

Թիֆլիսում ծախվում է կովկասեան գեղօրէից առևտրական ընկերութեան մէջ։

(Ц. 22121) 9—6

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ ԵՐԹԵՒԵԿՆԵՐԻ ԲԺՇԿԱՊԵՏ ՔՈՒՉԱՐԵԱՆՑԻ

(Եքեանեան հրապարակում Ծինոճղպօվի պոնը.)

Ընդունելութիւնը ամեն օր.

Առաւօտեան 9—10 ժամին Ա. Բախտաւով—կանանց և երեխաների հիւանդութիւնների։ 10—12 ժամին Կ. Բախտաւով—Ներքին չղջային հիւանդութիւնների և էլէքտրական բժշկութիւն. 12—1 ժամին Գ. Քուջարեանց—Արտաքին, վիրաբուժական, աչքի և վէներական (ծածուկ) հիւանդութիւնների։

Երեկոյեանները 6—8 ժամը, իսկ չորեքշաբթի և շաբաթ երեկոյեան ժամերին կոկորդի և ականջի հիւանդութիւնների։

Ամենայն օր քննվում են ծծմայրների և ծառաների առողջութիւնները և ծաղիկ են կորում։

Վարձ խորհրդի համար առաւօտեան 40 կ., իսկ երեկոյեան 60 կոպէկ։

Ձքաւորները անվարձ։

Հիմնադիր բժշկապետ
Գ. ՔՈՒՉԱՐԵԱՆՑ.

X—16

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՆՈՐ-ԴԱՐ

ՀԱՅՈՑ ՄԻԱԿ ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ
ԹԻՖԼԻՍՈՒՄ
ՆԵՐԿԱՅ 1887 ԹՈՒԱԿԱՆԻՆ
(Չորրորդ տարի)
Հրատարակվում է նոյն պէսով և ծրագրով

Տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուան՝ 6 րուբլի, հատով՝ 5 կոպ.
Եւրոպացի և թիւրքիայի բաժանորդները վճարում են 30 ֆրանկ։
Բաժանորդ են գրվում իւրաքանչիւր ամսի 1-ից։
Թիֆլիսում բաժանորդ են գրվում Ջղկոյն «Նոր-Դար»-ի խմբագրատանը։
Խմբագրատունը գտնվում է պօստատան հանդ. Տրօյիցկայ փողոցի վերայ, Սաաբա (Տրօյցկայա) եկեղեցու հանդէպ, տուն № 9։
Օտար քաղաքներից դիմում են խմբագրութեան՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase) Rédaction «Nor-Dar».
Подписка единственной ежедневной армянской газеты «НОРЪ-ДАРЪ» принимается исключительно въ конторѣ Редакціи Тифлисъ, въ центрѣ города, за Почтой на Тройцкомъ переулкѣ, въ домѣ № 9.

ԲԱՑՈՒԱԾ Է 1887 ԹՈՒԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ

„ՌԱԴՈՒԳԱ“

ՀՐԱՏ. Վ. ՏԱՐԻ
Բաժանորդագինը տարեկան առանց տեղ հասցնելու 5 րուբլի

Տէղ հասցնելով և օտար քաղաքները ուղարկելով 1887-ին 6 րուբլի

չաբաթաթերթերի ներկայացմամբ «Րադուգա»-ն բնկլամների կարօտ չէ, նա արդէն հարթել է իւր ճանապարհը և կարող է հպարտանալ այն գիտակցութեամբ, որ ոչ միայն Ռուսիայում, այլ արտասահմանում էլ չկայ մի թերթ, որ այդպիսի քիչ վճարով այդպիսի բազմազան նիւթ, այնքան չատ գրականական և հրաժչտական յաւելուածներ տար, և բացի դրանից այնպիսի գեղեցիկ ձրի պրէմիա տար՝ ինչպիսին «Րադուգա»-ն է տալիս իւր բաժանորդներին։

1887 թուին ընդունին կը տառնակցեն գրականական ամենալաւ ոյժերը, որոնց ինքը օր օրի վերայ աւելանում է։

Խմբագրատունը արդէն կան անպակին քանակութեամբ չափազանց հետաքրքիր վէպեր, վէպիկներ, պատմածներ, դրամատիկական դրուածներ և այլն և այլն, որոնք նշանակուած են ներկայ 1887-ի «Րադուգա»-ի մէջ տպագրուելու, անցեալ տարիների նման, այս տարի էլ կը տպագրուին մի քանի ընդարձակներ, որոնց լուծման համար վարձ կը նշանակուի։

Ապահով լինելով, որ «Րադուգա»-ն ամբողջ Ռուսիայում ամենաբազմակողմանի և բազմանիւթ պատկերազարդ ընտանեկան թերթն է, խմբագրութիւնս ներկայ 1887-ին էլ չբաւականանալով իւր՝ մինչև այժմ միւս նոյնպիսի թերթերից ունեցած գանազանութեամբ, պիտի մի նոր յաւելուած էլ տայ, այն է.

„ՌԱԴՈՒԳԱ“-Ի ԾԱՂՐԱԿԱՆ ԱԼԲՈՄԸ“

Աւազէ, անվտանգ շուտասելուկներ, անեկդոտներ, ծիծաղաշարժ պատմութիւններ, արկածներ, կատակներ և այլն, որոնք զարդարած կը լինին բազմաթիւ պատկերներով։

ԱՅՍՊԻՍՈՎ „ՌԱԴՈՒԳԱ“-Ի ԻՒՐԱՔԱՆՉԻՒՐ ԲԱԺԱՆՈՐԴ ԿՍՏԱՆԱՅ ՏԱՐՈՒԱՅ ԸՆԹԱՑՔՈՒՄ

50 №№ «Րադուգա»-ի
25 №№ Բեմ և երաժշտութիւն
12 №№ «Սալօն»
12 №№ Պարիզի նորաձևութիւն.
6 №№ Ամարանոցի կեանք.
25 №№ Զայնագրուած երգեր (մօտ 50 պիէսներ)
Ծաղրական ալբօմ և բացի դրանցից մի մեծ շքեղ ձրի պրէմիա

„ԳԻՇԵՐ ԵՒ ՑԵՐԵԿ“

Մի մեծ ալլեգանութիւն Ֆր. ԲՕԴԵՆՄԵԼԼԵՐ ՊՐՕՖԵՍՍՕՐԻ։

Այս շքեղ պատկերը պատրաստած է արտասահմանի ամենալաւ գեղարուեստանոցում։ „Րադուգա“-ի բաժանորդները արդէն գիտեն, թէ որքան առատաձեռն է խմբագրութիւնս։ Նա ոչ մի ծախս չէ խնայում իւր բաժանորդներին այդպիսի ապագայ։ Բաւ է ասել համար։ Անցեալ Թուխրի պրեմիաների համար խմբագրութիւնս ստացել է բազմաթիւ շնորհակալութիւններ մեծագալ։ Բաւ է ասել Համար։ Անցեալ Թուխրի պրեմիաների համար խմբագրութիւնս ստացել է բազմաթիւ շնորհակալութիւններ մեծագալ։ Բաւ է ասել